

Սերգեյ Ն. Սարինյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

**ՄՇԵՐԻ ԱՌԱՍՊԵԼԸ ԸՍՏ ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ
«ՄՇԵՐԻ ԴՌԱՆ ԳԻՐՔԸ» ՎԵՊԻ**

(Լուծու՞մ, թե՞ փակուղի)*

Բանալի բառեր – միֆ, միֆոլոգիա, Սասնա տուն, Քարանձավ, Ազոավաքար, Միեր, Դավիթ, արգանդ, միստիցիզմ, հոռետեսություն, Մեծ պայթյուն, Ատոմային ռուսը, բանահյուսություն, Համահավաք, ազգային ոգի:

Խեչոյանի ստեղծագործությանը խորապես գիտակներն անգամ չէին կարող կռահել, թե ինչ ձև ու բովանդակություն պետք է ունենար ազգային էպոսի վիպականացման նրա ավելի քան տասներեքամյա որոնումների արդյունքը: Եվ այժմ ահա գիրքը կա, բայց ինքը չկա, ու ականա տրվում ես ճակատագրի խաղին, թե Միերի գիրքը նաև իր կյանքի գիրքն էր ու խորհրդանշում էր ծնունդ և մահ ողբերգական անխուսափելիությունը:

Գիրքը ներկայացված է Հակոբ Մովսեսի խորապես ըմբռնված և գրականորեն ստույգ առաջաբանով, վեպի ժանրային բնույթի ու փիլիսոփայական համակարգի լիարժեք բնութագրումներով: Չուշացան նաև արձագանքները՝ յուրովի ընկալմամբ ու առերևույթ դիտված բնորոշումներով՝ «ազգային ինքնության փիլիսոփայություն», «ճանապարհի գիրք» և այլն, որոնք թեև սխալ չեն, սակայն առկա են բնագրի փիլիսոփայական համադրույթի հանդեպ: Եթե այսինչ կամ այնինչ երևույթը սխալ չէ, այդ դեռ բոլորովին չի նշանակում, թե ճիշտ է:

«Միերի դռան գիրքը» բարդ կառուցվածք ունի: Գրողն ստեղծել է պարականոն վեպի մի տարբերակ, որպիսին անօրինակ է թե՛ ժանրային ձևով և թե՛ պատկերային համակարգով: Ըստ ձևի պարզ է՝ պատումի դասախոսական եղանակը: Բարդը ձևային է, տարաբնույթ հոսանքների խաչաձև անցումները, ուր կցորդված են անձնականը, հասարակական-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 4.09.2014:

Չ (ժԲ) քառի, թիվ 3 (47) հոլխ-մեպրեմբեր, 2014
ՎԷՄ համահայկական հանդես

հրապարակախոսականը և բանահյուսականը: Ազգային էպոսը գրողի տեսադաշտում է, «Համահավաքի» և հարյուր հիսուն տարբերակների համադրությամբ, ու առաջին պահին, թվում է, թե հեղինակը ժխտում է «Համահավաքը», բայց դա բացասում չէ, այլ բացասման բացասում, այսինքն՝ դրույթի հաստատում բացասման ձևով: Համահավաքը, որ կազմել են երևելի գիտականները, ազգային էպոսի սյուժեն է, որ գծվում է նաև Խեչոյանի վեպում: Բայց գրողը սյուժեն ստորոգում է էպոսի հարյուր հիսուն տարբերակների ֆաբուլային անծայր ոլորտներում, որոնց ընդերքում և թաքնված է առեղծվածը: Այստեղ է ստեղծագործական որոնումների ամբողջ բարդությունն ու նյութի դիմադրության տառապանքը:

Բայց գրքի կառուցվածքում մի ամբողջ շերտ է կազմում Միերի և հեղինակի տրանսֆորմացիան՝ իր մեջ առնելով Միերի առեղծվածի գաղտնիքները: «Մի խոսքով, բարեկամներ, ամենացավագին հակասական զգացմունքներով Միերն իմ ներսում էր»¹, - այսպես է ավարտվում «Առաջին դասախոսությունը», որ նախերգանքի արժեք ունի և ուղենշում է ստեղծագործական որոնումների ուղղությունը: Ելման գիծն ավելի քան հստակ է ու գիտակցված. եթե հեղինակը վիպերգի իմաստը վերագրելու լիներ միայն «նախնիների հնագույն օրենքների, նրանց ժամանակի խորհրդավորության, հավատամք-կարգակառույցի, ծեսերի» (էջ 11) նկարագրությանը, ապա դա կխճճեր որոնումների ընթացքը:

Հետևաբար, առեղծվածի լուծման և ազգային վեպի պատմամշակութային արժեքի բացահայտման համար անհրաժեշտ է համակողմանի հետազոտական լարում, ուր գիտությունը ձուլվում է գեղարվեստի հետ: Վեպի գաղափարը սկիզբ է առնում հարցի տրամաբանական դրվածքից. «Այն ամենը, ինչ հազարամյակներ շարունակ Սասնո աշխարհի գոյատևման հաջողակ խարիսխն էր եղել, պահպանվել էր իշխանական մեծ տան ձկուն մտքի և քրտնաջան աշխատանքի շնորհիվ, մի ձեռքին զենքը, մյուսին՝ արծաթն ու ոսկին՝ մրցակցելով գերիզոր տերությունների հետ, զարկելով ու զարկվելով ռիսերիմ թշնամիների հետ, հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք՝ աշխարհի չորս ծագերին, նշանավոր և տարանցիկ ճանապարհների հանգույցներին, Սասունի իրավունքները հաստատող արծվի զինանշաններով չորս իշխանատներ էին կառուցել» (էջ 51-52): Այսպիսին էր մեր երկրի պատմությունը: Սակայն հանկարծ հայտնվել է մի նոր սերունդ, որի համար իշխանական Մեծ տան ավանդներն արժեք չունեն, և որը այլևս չի ցանկանում կառավարվել իշխանական Մեծ տան օրենքներով, և այս պահից էլ երկրում սկսվում են «խոշոր հուզումների խառնակիչ ժամանակների շրջանը»: Այստեղ է Միերը հայտնվում հայոց պատմության հանգույցում, փորձելով «տիեզերական շրջապտույտում, մառախլածածկ անդունդներում հայտնված, հուսալքված ազգային ոգին ամրապնդել, նեցուկ լինել, նրա համար ելքի դուռը որոնել» (էջ 49):

Դրույթը նույնանում է Միերի առեղծվածի բացահայտմանը, որ Խեչոյանի որոնումներն ուղղում է ոչ միայն ազգային վեպի հարյուր հիսուն տարբերակների քննաբանությանը, այլև խնդրին առնչվող տիեզերա-

1 Լևոն Խեչոյան, Միերի դռան գիրքը, Եր. էջ 29: Այսուհետ գրքի էջերը կնշվեն տեքստում փակագծերի մեջ:

բանական երևույթների իմացությանը: Այս տեսակետից ուշագրավ է օգտագործված գրականության նշումը վեպի ծանոթագրություններում (երևույթ, որ առհասարակ բնորոշ չէ գեղարվեստական երկի, մասնավորապես վեպի համար):

Առաջինը հայ միջնադարի (15-րդ դար) հանրահռչակ մատենագիր, աստվածաբան փիլիսոփա Գրիգոր Տաթևացին է, որի բազմահատոր աշխատություններում արտացոլվում են դարաշրջանի պատկերացումները տիեզերքի, մարդու, դրախտի և դժոխքի, աշխարհի կառուցվածքի մասին²: Իր դպրոցում Տաթևացին ուսուցանում էր հայոց պատմություն, Հին և Նոր կտակարաններ, մեկնում էր սուրբ հայրերի, Պլատոնի, Արիստոտելի, Փիլոնի, Պորփյուրի գրվածքները: Խեչոյանին առանձնապես գրավել են հայոց տոմարի կազմույթն ու տրամաբանական մեթոդը: Ուշագրավ էին Տաթևացու մտածումները ճակատագրականության, «մարդու կազմության», հրեշտակների, դևերի, մեղքերի քավության և այլ երևույթների մասին: Հատկապես նշանակալից է մարդու հողեղեն կազմույթի գաղափարը. «Ձի մայր մեր հողն է, և սեղան, և տիեզերք, և գերեզման, թեպետ և այլ տարերքն են մեզ ազգականք, այլ մէք ի մորե ծնանիմք»³:

Ս. Պետրոսյանի «Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում» գրքում հասարակության սոցիալական կառուցվածքի խնդիրն է, Մեծ տան ավագանու, հոգևոր դասի և ժողովրդի հիերարխիկ ընդհանրությունը, որի միջով անցնում է Միերյան առասպելի գոյաբանական աստղծր:

Անգլիացի հայտնի ֆիզիկոս Սթիվեն Խոկինգի և Լեոնարդ Մշադինովի «Ժամանակի համառոտ պատմությունը»⁴ աշխատությունը նվիրված է տիեզերքի ստեղծման պատմությանը՝ տիեզերաբանական ուսմունքի հիմնադիրների հիշատակումով՝ Ալբերտ Էյնշտեյն, Գալիլեո Գալիլեյ, Իսահակ Նյուտոն: Արարչության սկիզբը Մեծ պայթյունն է, որ շարունակվում է հավերժաբար և իր էվոլյուցիայի հետ առաջադրում գիտական ու փիլիսոփայական վարկածներ՝ ինչպես ծագեց տիեզերքը, ինչ ուժեր են պայմանավորում նրա զարգացումը, ինչպիսին է ժամանակի ու տարածության բնույթը, ինչպես կազմավորվեց տիեզերքի իմացությունը ու թերևս ամենահետաքրքրականը՝ տիրապետում էր արդյոք ազատությանը Աստված, երբ արարում էր տիեզերքը: Այնուամենայնիվ, Խոկինգի գլխավոր հայտնությունը Սև պատվածքի (փլվածքի) տեսությունն է, թերևս տիեզերքի ամենահուզիչ գաղտնիքը:

Սակայն տիեզերքը կարող է գիտակցվել ու պատմություն ստեղծել միայն բանականությամբ, այսինքն՝ երբ նրա կենտրոնում հայտնվում է մարդը: Այս իմաստով, Արթուր Արմինը գիտությունների փորձից ընդհանրացում է կատարում, թե այդ գիտակցության կենտրոնը Հայկական լեռնաշխարհն է, որտեղ ձևավորվել է «Մասնա ծոեր» դյուցազնավեպը, որ նա անվանում է «Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ»⁵: Այստեղից

2 Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Դ., 1970, էջ 409-417:

3 Նույն տեղում, էջ 414-415:

4 Տե՛ս «Кратчайшая история времени», М., 2006.

5 Տե՛ս Արթուր Արմին, Հնագույն հեթանոսական Աստվածաշունչը, «Մասնա ծոեր» էպոսը, Լոս Անջելես, 2007:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Զ (ԺԲ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (47) Խոյիս-տեպրեմբեր, 2014
ՎԷՆ ԽԱՄԱՆԱԿԱՅՎԱԿԱՆ ԽԱՆՔԵՆ

հետևում է, որ «Մասնա ծեռը» նախաէպոս է բոլոր կարգի էպոսների համար: Գիտությունն ապացուցել է, որ հնդեվրոպացիների (արիացիների) նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն է: Աշխարհի հնագույն հողագործները եղել են Հայաստանում և, տարածվելով աշխարհում, իրենց հետ տարել են բառամթերք, աշխարհայացք, աստղագիտական գիտելիքներ, ձիաբուծություն, պղնձաձուլություն և այլն: Արիական բոլոր հնագույն հավատալիքները ուղղակիորեն աղերսվում են տիեզերական աստղուտների շրջապատույտի և փուլային անցումների հետ: Հայկական լեռնաշխարհը կենդանակերպի հայրենիքն է: Հերմեսյան օրենքով այն, ինչ վերևում է, նույնը ներքևում է, այլ կերպ ասած, երկինքը քարտեզագրված է ըստ Հայկական լեռնաշխարհի: Փոքր Միերը վերջին աստվածությունն է, տիեզերական լոգոսը, այսինքն՝ «տիեզերական հոգին տիեզերական նյութի մեջ»: Դրա համար է նա Ագռավաքարում: Սա մեր էպոսի թաքնագիտական հղումներից մեկն է: Թաքնագիտություն է նաև ազգի հեռանկարի հարցը էպոսում: Այս իմաստով, Փոքր Միերը ոչ միայն տիեզերափուլը փակող աստվածություն է, այլև նոր փուլ, նոր հարություն բերող աստվածություն: Վերջապես մի դիտարկում ևս. Բիբլիան բառացիորեն չի նշանակում Աստվածաշունչ, այլ Գիրք, և հավանաբար «Բիբլիա» հասկացությունը ծագում է մեր հին հեթանոսական իմացաբանությունից: Ինքնին ուշագրավ է, որ Խեչոյանն իր վեպն անվանել է «Միերի դռան գիրքը»:

Սամվել Շահինյանի դրույթը Տիեզերքի եռամիասնության համակարգի հայկական առասպելաբանությունն է՝ երկինք, երկիր, ծով: Բնապաշտական առասպելաբանական հայեցակարգի ստորգետնյա բաղադրիչը նախապատմական քառսի Սև ջուրն է, որտեղ վերջանում է ամեն ինչ: Սև ջուրը, սակայն, աշխարհակործան հատկանիշից բացի երկակի բնութագիր ունի: Տիեզերքը շրջապատող ջրերը երկնքում դառնում են լուսավոր «Ծով Ծիրանի»: Սև ջրերն ու Ծով Ծիրանին կապելով երկիրը երկնքին՝ հազարամյակների ընթացքում ձևավորում են Մարդ-լուսաբեր այծ-կենսաց ծառ հոգևոր բարձր եռամիասնություն: Հնագույն բնապաշտական հավատալիքներից ֆալլոսի պաշտամունքը միակն է, որ գոյատևեց վերջին սառցապատման ժամանակաշրջանում և առեղի կատակլիզմների արդյունքում հաստատեց արական նախասկզբի կենսունակությունը: Հայկական լեռնաշխարհում ձևավորվեց Տիեզերքի նախաստեղծ մոդելը: Սառցապատումից հետո Մարդը՝ Կենսաց Ծառի տեսքով, դարձավ տիեզերակենտրոն՝ հավերժաբար վերարտադրվող և վերածնվող կենսատու աղբյուր:

Ամենաընդհանուր ձևով այսպիսին են Խեչոյանի վեպի հավելվածում նշված գրականության առաջադրած գաղափարներն ու պատկերացումները տիեզերքի կառուցվածքի և Հայկական լեռնաշխարհում ձևավորված նախաստեղծ էպոսի մասին: Ակներև է, որ նշված գրական աղբյուրները իմացաբանական հղումներ են տալիս բացահայտելու Խեչոյանի «Միերի դռան գիրքը» վեպի գիտափիլիսոփայական հիմնադրույթը:

Եվ սակայն Խեչոյանի վեպի տիեզերական կեցության իմացության տեսակետից անհրաժեշտ է անդրադառնալ Քարանձավի միֆոլոգիային, քանզի կապը Ագռավաքարի ու Քարանձավի միջև միանգամայն ուղղակի է և այս իմաստով Քարանձավի միֆոլոգիական պատկերացումների մեջ

հանգուցվում է նաև վեպի հիմնադրույթը:

Ըստ միֆոլոգիական ավանդույթի՝ Քարանձավը (Ագռավաքարը) իրական աշխարհի հանդեպ անտեսանելիորեն երևակայելի, մութ ու լուսավոր տուն է, ուր ավելի շուտ ապաստանում են վտանգից, քան ապրում: Քարանձավն ապաստան է ճգնակեցության կամ բնակավայր նախամարդու համար: Ի տարբերություն տան, քարանձավը ծածկված է, աչքին անտեսանելի, անթափանցելի մշուշով, այնտեղ քառսի տարերքն է, մութ ու անտեսանելի է, ինչպես քառսում, այնտեղ միայն կարելի է լսել, բայց ոչ տեսնել: Այստեղից էլ երկիմաստ ասույթը քարանձավը՝ որպես ականջ, և ականջը՝ որպես քարանձավ: Քարանձավի ներքին տարածությունը անկառուցվածք է, անձև, խառնակ ու խձձված: Քարանձավում գիտակցությանը, բանականությանն ու տրամաբանությանը փոխարինում են շշուկը, բնագոյը, ինտուիցիան, ենթագիտակցությունը, թաքուն բաղձանքը: Քարանձավի փիլիսոփայական միֆում, ըստ Պլատոնի, տեսանելի են առարկաների, մարդկանց սովերները, առարկայական երևելի պատկերները, բայց ոչ իրերն ու առարկաները: Քարանձավը սրբազան ապաստարան է և թաքստոց: Այնտեղ աշխարհից թաքնվում են մենակյացները, հալածականները, այնտեղ ժամանակին գտնվում էին քնած թագավորները, հերոսները, առաջնորդները, գուշակները, մարգարեները: Կրակը և օջախը քարանձավում նմանեցվում են ձվի (դեղնուցը՝ կճեպով) կամ արևի երկնային փայլի:

Քարանձավային միֆը տարբեր ժողովուրդների ավանդություններում այլ իմաստներ է հայտնաբերում: Ուշագրավ են, օրինակ, քարանձավի վերաբերյալ տարածված պատկերացումները, որպես շարունակական քամիների, անձրևի, ամպերի, կործանարար, ոչնչացնող տարերք կամ որպես պտղաբերության հարուցիչ և կրող: Քարանձավը համադրում է կյանքը-մահը-պտղաբերությունը, որպես միաժամանակյա հղիություն, ծնունդ և մահ, սկիզբ և վախճան: Քարանձավի հետ է կապվում կրքերի ու ոգեշնչման ուժը: Քարանձավը հողի ընդերքն է, արգանդը, միաժամանակ՝ պտղաբերումի և գերեզմանի տեղը: Մի շարք ավանդություններում Քարանձավի պատկերը ներկայացնում է մարդաբանական միֆը, առաջին մարդը դուրս է գալիս անդրաշխարհի թագավորությունից Քարանձավի միջոցով: Կարելի է նկատել, որ աստվածաշնչյան շատ առասպելներ առնչվում են Քարանձավի հետ, ինչպես, օրինակ, Քրիստոսի ծնունդն ու մահը, առաջին քրիստոնյաների քարանձավային թաղումները և այլն: Կյանքի, մահվան ու հարության ներծուլումը քարանձավի պատկերում վկայում է, որ այն օգտագործվել է որպես սրբավայր, այլև վաղ քրիստոնեական տաճարների քարանձավային պատկեր, ինչպես, օրինակ, սիրիական, հայկական եկեղեցիները: Խրամ-քարանձավը իրենից ներկայացնում է տիեզերքի մոդելը: Կա որոշակի հիմք խավարի մեջ լուսյի գնոստիկական պատկերը բացատրելու քարանձավի կոնցեպտուալ սխեմայով: Հաճախ քարանձավը տեղայնացվում է կամ լեռան, կամ խոր կիրճի հետ և հայացքը դեպի երկիրը, երկինքը կամ անդրերկրային թագավորությունը: Մի դեպքում Քարանձավը ներկայանում է որպես մայր-հողի ձուլումը հայր-երկնքի հետ, մեկ այլ դեպքում՝ որպես մուտք դեպի

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2 (ՃԲ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒԽ-ՄԱԿՐԱԲԵՐ, 2014

ՎԷՆ ԽԱՆԽԱԿՅԱԿՎԱԿԱՆ ԽԱՆՔԵՆ

ներքին աշխարհը: Քարանձավը որպես մուտք դեպի այլ աշխարհ, ներկայացնում է վտանգը, որտեղ ապրում են այդ մուտքի պահակները, և պետք է իմանալ թաքու կիրառելու գաղտնիքը: Լինում է նաև բացարկային (կոնտամինացիա) դեպք, երբ քարանձավը, լինելով լեռան վրա, նայվածքը դեպի ստորին թագավորությունն է⁶:

Համեմատությունը ցույց է տալիս, որ Խեչոյանը խորապես գիտակ էր քարանձավի միֆոլոգիային և նրա նմանությամբ ներկայացրել է Ագռավաքարի պատկերը: Այստեղ է Խեչոյանի հայտնությունը: Նա տիեզերական այլ սահմանների վրա է դիտում ազգային վեպի ժամանակը, տարածությունը և ազգային բանահյուսության ատաղձը:

Միերը վեպի տարածքում հայտնվում է երազային տեսիլների մեջ: Քարանձավում նրա փակվելը հասկանալու համար, ասում է հեղինակը, «փորձում էի այն մանկության տարիներին տեսած կենդանական աշխարհի ինքնապահպանության բնագդին, ինչպես էին մսագործի ձեռքերի տակ մամլված ցուլը, խոյը կամ վարազը մորթվելու՝ շունչը տալու ամենավերջին ակնթարթին էգի հետ զուգավորման նմանությամբ անգիտակից ռեֆլեքսային սերմնաժայթքումով հողը ողողում, տեսակը պահպանելու փրկության ակտ էին կատարում» (էջ 16):

Մտքի սևեռումները երազային տեսիլների մոձավանջում նշմարում են հարյուր հիսուն պատումների անառարկելի վկայությունը, որ «տարին մեկ անգամ Համբարձման գիշերը Միերն Ագռավաքարից դուրս գալու, աշխարհի հետ կապվելու փորձեր է կատարում», և ժողովուրդը, որ հավատում էր նրա անմահության առասպելին, միստիկ արարողություններով օգնում էր նրան դուրս գալու քարայրից: Բայց դա երազային պատրանք է և ավանդազրույց, իսկ իրականում ներհակ մտածումները տակավին հանգրվան չէին գտնում:

Ես ակնարկեցի գրողի և Միերի փոխաձևության մասին և կրկին հավաստում եմ, որ որոշակի միտումով է իր անձնական կյանքը զուգահեռում էպոսի հերոսների կենցաղային ինչ-ինչ «շեղումների» հետ: Որ Դավթի պարագայում «արտասանունական կապով դուստր ծնելը խախտել էր հավատամքային կարգուկանոնով սահմանված տիեզերական գերագույն օրենքները» (էջ 44), նկատելի իրողություն չէր լինի, եթե այդ «շեղումը» բնորոշ չլիներ վիպերգի բոլոր հերոսներին: Նույն շեղումը ներգգայում է նաև գրողը, հայտնվելով կենցաղային-ընտանեկան խճճված հանգամանքներում: Թերևս սա էթնիկ-տոհմիկ ձակատագրի տրվածք է, որ հուշում է Միերի առեղծվածի լուծման ինչ-որ ազդակ, իրոք որ տոհմիկ հատկանիշ, քանզի «ազգային վեպը հայր նախնիներից մեզ հասած սահմանադրության, հավատամքի սրբազան գիրքն է» (էջ 12):

Առանց տարրալուծելու և սահմանելու վեպի սյուժետային հոսքերը դժվար է ընդգրկել նրա համապարփակ բովանդակությունը, և միայն այդ հոսքերի բարդ միասնության եզրերում կարելի է որոնել վիպական առեղծվածի լուծումը: Այս իմաստով էական է նկատել, որ Խեչոյանի գիրք-էպոպեայում ազգային էպոսը տրանսֆորմացված է արդի իրականությամբ և արդի իրականությունը իր հերթին տրանսֆորմացված է

6 Քարանձավի միֆոլոգիայի մասին տե՛ս «Мифы народов мира», т. 2, Москва, 2000, с. 311-312:

էպոսի դրվագներում:

Ինքնին ուշագրավ է էպոսի՝ որպես սոցիալ-մշակութային երևույթի բնութագրումը. «Ազգային վեպը չանձնավորված ուժ է, որ մեր աշխարհին կարգ, ներդաշնակություն է բերում, իր երկար ճանապարհին ազգային մտածողություն, հոգեբանություն, անգամ վարքագիծ է ձևավորել: Այն ոչ թե պատմության այլաբանական կամ խորհրդանշային արձանագրությունն է, այլ երկրի հասարակական և քաղաքական վիճակների վրա անմիջապես ազդեցություն ունեցած օրենսգիրքը կամ դավանաբանական անսահմանության խորքերում անհատի երջանկության ճանապարհի որոնման ուղենիշը» (էջ 211):

Վեպում հենց այս հայեցակետից է դիտված Միերի կերպարը, որպես թե «Մեր ժամանակի տեսանկյունից նայելով»՝ նա, հակադրվելով սերնդեսերունդ փոխանցված սոցիալական ու քաղաքական մտածելակերպին, «ազգային հոգեբանության կառուցվածքում հեղաշրջում է կատարել»:

Գրողը որոշակի է միացնում անցյալի ու ներկայի կապը, երևույթն իմաստավորում պատմության փիլիսոփայությամբ: Երկուհազարամյա կենդանության հավանական թե անհավանական առասպելը պատկերում է որպես «քրոնոտոմի հյուլե աշխարհարարման նախաստեղծ մայր արգանդում», ուր դարերը միացնում են ժողովուրդների ու պետությունների հարատև պատմության քարտեզը, իսկ Համբարձման գիշերը հովվի հետ ուղարկած պատգամը աշխարհի կործանման չարիքն է գուշակում, թե՛ «Այս՝ ինչ ուղերձ էր, մեր ժամանակների ոգին էր՝ ատոմային ռումբի կոճակը սեղմելու նմանությունը, թե տիեզերքի բնական ընթացքով խոշորանալ, անընդհատ ծավալվելու ճանապարհով մեծ պայթյունի գալուստն էր վկայում, որ կործանելու էր երկրագունդը, հետո նոր միայն քանդվելու՝ վերակառուցվելու օրենքի համաձայն կրկին դեպի ամրոցը՝ մեկ միասնական երջանիկ մոլորակի, վերստին նորոգված նոր փուլի, նոր սկզբի ժամանակաշրջանում էինք ապրելու» (էջ 102-103):

«Դասախոսի ներկար օրագրերում» էպոսի մղձավանջում արտաբեկված ներկա իրականությունն է: Զուտ անձնական, կենցաղային մտահոգությունների արանքում արձագանքում է գիտականի կազմած Համահավաքի անհամատեղելիությունը վիպերգի հարյուր հիսուն տարբերակների հակադիր, հերքող փաստարկների համեմատ:

Արդեն կասկած է հարուցում իր «Միերի դռան գրքի» անհրաժեշտությունը, որի «լույս աշխարհ գալը հասարակությանն էլ չէր հետաքրքրի, որովհետև հրապարակում արդեն չորս հայտնի ազգագրագետների և բանասերների կողմից բոլոր հարյուր հիսուն պատումներից բարբառային միասնական մշակումով, ժողովրդին մատչելի, նկարներով ուղեկցվող մի ընդհանրական համահավաք գրքի տարբերակ էր հրատարակվել» (էջ 136):

Եվ այնուամենայնիվ, հետազոտական իր մղումները ենթադրում են բազում անհայտների բացահայտում, իսկ ազգային վեպ գրելու իր ցանկությունը գալիս է Միերի կենդանի լինելու, նրա անմահության հավատից: Եթե Միերն անմահ է, ուրեմն անմահ է նրա ոգին, հետևաբար էպոսը շարունակվում է և ապագայի խորհուրդն ունի Միերի պատգամը:

Երևակայության թանձրամած մշուշում պատկերում էր իր ուրվականի անտես ներկայությունը «տիեզերական մութ քարայրից դիտելու գոյաբանական աշխարհը», կամ կործանելու հին աշխարհը, կամ նոր աշխարհի «նոր փուլի սկիզբը դնելու մղումով ատոմային ռումբի կոծակը սեղմելով՝ տիեզերքի ծագման և վերջի մասին գիտական ենթադրություններից մեկն էր լինելու, որ մեծ պայթյունով էր տիեզերքի սկիզբը դրվել և մեծ լուծումների ժամանակի շրջանը պիտի նորոգվեր...» (էջ 178): Այդ նորոգության արձագանքները լսելի են նաև նորօրյա միտինգավորների բարձրախոս գոչումով, միանգամայն թափանցիկ ակնարկով, թե իշխանավորները դեռ տասը մարդ չէին սպանել, ոմանք խմբերով մարդկանց պաստառներ էին կրում, այլոց «առաջավոր մտքերով կարգախոսներն էին երևում»: Ավելին, ասում են, որ «իշխանությունն օլիգարխների հետ է միավորվել, սափրագլուխներին գինվորական շորեր էին հագցրել, հենց նոր զենքով կոտորեցին ժողովրդին» (էջ 180):

Ավագանին այլ կերպ է ընկալում Ագռավաքարում ինքնական փակվելու Միերի որոշումը, թե դա դավաճանություն է նախնիների հանդեպ, որ սկիզբ է դնում սեփական տոհմի կործանման, և միաժամանակ ճշմարիտ համարում նրանից հրաժարվելու միտումը, քանզի արյան հետքը մանկական ափի մեջ գուշակում է ինչ-որ չար, դիվական կիրք նրա բնություն: Հանելուկը լուծում է ենթադրում, թե «միջավայրին հակադրվելը կարծես մեր ազգային բնավորության դրսևորումն է», և լեռնային գետակի խառնվելը Տիգրիսին, Սանասարի ու Բաղդասարի ականատեսությամբ, «մեր տեսակի զորությունն են ներդնում համաշխարհային քաղաքակրթության առաջընթացին», ինչի գիտակցությամբ էլ երկվորյակ եղբայրները բնակություն են հաստատում նրա ակունքներում:

Բայց աշխարհ կոչվածի անակնկալներն անմեկնելի են և կախում չունեն բուսական ու կենդանական աշխարհի տագնապներից, բնության փլուզումները նախանշող երկնային նշանների գուշակությամբ, նաև՝ «մարդկային ապրելակերպի, կենցաղի, ծնունդների և մահվան մեջ» (190): Այսպես ապրել է ժողովուրդը, և կենսունակ է եղել գոյատևման բնագոյը, «Գալիքը մարդկանց առաջ մութ մշուշի պես էր եղել, իրականում Հայաստանը դատարկվել, գերեզմանատուն էր դարձել... բայց կյանքը նորից սկսվեց ամայությունից, չոչնչացանք: Եղաններով գնացին Սարդարապատ Հայաստանը փրկելու: Ջարդել են և Շապուհին, և Հուստինիանոսին, և Բեյազետ սուլթանին», իսկ Անդրանիկը, Նժդեհն ու Սյանիկյանը հոգու զորությամբ պահեցին Հայաստանը: «Միերի դռան գրքի» նպատակը կերպարի առեղծվածի լուծումն է, որի դիտակետից ազգային վեպի «սյուժեն» սոսկ ուղեկցող տարր է թվում: Եվ սակայն էպոսի սյուժեում թաքնված է հայտնության գաղտնիքը: Սկիզբը Վասպուրականի Գագիկ թագավորի դուստր Ծովինարի կնությունն էր խալիֆին: Բայց Ծովինարն արդեն հղի էր հայրենի լեռների հրաշք գեղեցկության և երկու բուռ ջրից առած հղիությամբ, որ անհավանական է թվացել խալիֆին: Սակայն Զրադաշտի և սուրբ ծննդյան վերաբերյալ ավանդազրույցները հավատ են ներշնչում Խալիֆին, և նա հաշտվում է երկվորյակների ծննդյան հետ: Բայց պատանեկան բնավորությունների ձևավորման հետ Սանասարի ու Բաղդա-

սարի արյան կանչը անհնազանդություն է ստեղծում միջավայրի օտարոտի բարքերի հանդեպ, և Խալիֆի էության մեջ ծագում է նրանց վերացնելու զգացումը: Այդ նախազգացումով Սանասարը և Բաղդասարը հեռանում են Խալիֆի արքունիքից և արկածալից ուղիներով հայտնվում Եփրատի ավերում, ուր գետը հատվում է լեռնային առվակի սրընթաց հոսքով:

Բնության այդ հրաշքը փիլիսոփայական խորհրդանիշն է ակնաբերում, որ երևի ձակատագրական հուշ պիտի լիներ տոհմի բացառիկ տեսակի վերաբերյալ: Համենայնդեպս նկարիչը յուրովի է մեկնաբանում բնության խորհրդանիշը. «Լեռնային գետակը միախառնվելով համաշխարհային քաղաքակրթությունը խորհրդանշող Տիգրիսին, մեր տեսակի գորությունն էր ներդնում մարդկության առաջընթացին... Հավանաբար երկվորյակները գլխի էին ընկել՝ բնակություն հաստատելով ակունքների շրջակայքում, իրենք էլ էին փոխվելու» (էջ 188):

Բայց ինչ-որ շեղում, այնուամենայնիվ, առկա էր տեղամասի ընտրության հարցում: Բանն այն է, որ երկվորյակներն ընտրել էին գետի հակառակ ընթացքի դժվարահաղթ հոսանքը, և ոչ միայն Սանասարին ու Բաղդասարին, այլև հետագա ամբողջ սերնդին էր վիճակված կրելու «երկրի անխնա հարվածները՝ ունայնության կրնկակոխ հետապնդելը, անապատից անապատ մենավոր թափառականի քշվածությունը, խավարի անդունդներում խարխափելը» (էջ 186): Այդուհանդերձ, դրախտի գետի հատումը Տավրոսի լեռնային գետակով, ըստ նախապատմական քրմերի մատյանների գուշակության՝ «երկիր մոլորակի միջօրեականը Սաննա նահանգի Մշո լեռներով է անցնում, որը Քաղիթթ-Բաթմանա գետակի նույն ճանապարհն էր: Աշխարհագրական այդ ամբողջ միջավայրը խորհրդավորությունների սկիզբ էր նշանակել» (էջ 187-188):

Հատկանշական է, որ գրքի վերջին հատվածներում է գրողն անդրադառնում Սաննա տան հիմնադրման Սանասարի և Բաղդասարի նախածեռնումներին, իմաստավորելով, թե ազգային վեպը զվարճալի հորինվածք չէ, այլ «Հայասա երկրի և հետո էլ Ուրարտու պետության հավատամքի սուրբ գիրք, որպես սերունդների միջև չընդհատվող ժամանակի ամբողջություն, որպես իշխանական մեծ տան հարահոս կյանքի կրոնամիստիկ մի ամբողջ կարգակառույց, որ ոչ սկիզբ ունի, ոչ էլ վերջ» (301): Այսպես Սանասարը ծովի հատակից բերում է Քուռկիկ Ջալալիին և Թուր Կեծակին, ապա ուժով ու հնարամտությամբ Սասուն բերում Քառասուն Ճյուղ Դեղձուն Ծամին, որն իշխանական Մեծ Տան համար ծնում է Վերգոյին, Ձենով Օհանին, Մեծ Միերին:

Ինքնին հասկանալի է, որ Միերի առեղծվածը բացահայտելու համար անհրաժեշտ է էպոսի սյուժեի հետազոտումը, որն արդեն հետազոտության մեթոդ է դառնում խեչոյանական վեպի համար: Այսինքն՝ նա գծագրում է սյուժեն ըստ համահավաքի և վերլուծում այն հարյուր հիսուն տարբերակների համադրությամբ: Այսպես՝ Սանասարից հետո իշխանական տան ավագությունն անցնում է Մեծ Միերին: Սակայն նրա երևալը վատահամբավ կանանց թաղամասում, ապա նաև անպարկեշտ պահվածքը կանանց և աղջիկների նկատմամբ ցուցադրում են վարքի շեղում, որը վայել չէ Տան ավագանու ավագի համար: Նրա փառքը տարածվում է ամենուրեք, առ-

ԳՐԱԿԱՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

2 (ժԲ) քառի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

ՎԷՆ ԿԱՆԱԿԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՆ

յուծների դեմ մենամարտում, բայց նկատվում է, որ նա չէր կարող սխրանքն իրագործել առանց Փարվանայի, որի հետ արտասանունական կապի մեջ էր: Մերա Մելիքի դեմ նրա պայքարն ավարտվում է եղբայրական դաշինքով ու հազարամյակների ծիսական օրենքով, թե «որևէ մեկի կյանքից հեռանալու դեպքում մյուսը պարտավորվում է մեռած եղբոր կնոջ ամուսինը դառնալ»: Մեծ Միերն ամուսնանում է Արմաղանի հետ, բայց մեկ տարին չբոլորած, մեկնում է Սնըր, ըստ ուխտի՝ ամուսնանալու այրիացած Իսմիլ խաթունի հետ: Յոթ տարի հետո վերադառնում է Սասուն, ինն ամիս անց ծնվում է Դավիթը և նույն ժամին մահանում են Արմաղանն ու Մեծ Միերը:

Վեպում առավել ընդարձակ է ներկայացված Դավթի կերպարը: Ըստ Համահավաքի՝ ներկայացվում է նրա կենսագրությունը՝ ծնունդը, մանկությունը Սնըրում՝ Իսմիլ խաթունի խնամակալությամբ, վերադարձը հայրենիք, թափառումները, ապա մենամարտը Մելիքի հետ, վերջինիս սպանությունը և Սասունի ազատագրումը Խալիֆի տիրապետությունից:

Միերի և Ագռավաքարի գաղտնագիրը բացատրելու իմաստով նշանակալից են Դավթի և Չմշկիկ սուլթանի արտասանունական կապը և ապօրինի աղջկա ծնունդը, ապա ամուսնությունը Խանդուխտ Խաթունի հետ և Միերի ծնունդը, որին հաջորդում են Դավթի արկածալից թափառումները Տիբեթական ծովերի ափերում, հյուսիսային սառցադաշտերում եղջերասահնակով, Կոնգոյի ափերում փղերի որս անելիս և այլն, որն ինքնին անհնարին է դարձնում նրա վերադարձը: Եվ սակայն նրա վերադարձը ողբերգական ավարտ դրեց Սասնա տան գոյությանը: Հոր և որդու մենամարտը ավարտվեց Դավթի նգովքով, որ կրկնություն էր Ուրարտուի արքա Մենուայի հրամանով կանգնեցված պաշտամունքային սեպագրության բանաձևի՝ «Խալդի, Թեյշեբա, Շիվինի և Խուտուինի աստվածությունները թող ոչնչացնեն Մենուային և իր սերունդ երկրի երեսից» (էջ 120):

Խեչոյանը միանգամայն հետաքրքրական ու իմաստավոր մեկնություն է տալիս Դավթի նգովքին: Միերին դատապարտելով դամբարան մտնելու ճակատագրին՝ Դավիթն ու Խանդուխտը գիտեին, որ «Ագռավաքարը երկրի և անդրաշխարհի պորտալար, ելումուտի դարպասն էր, միջօրեականի այնտեղով անցնելու պատճառով քրմերն այն որպես գալսկտիկայի կենտրոն, աշխարհարարման նախաստեղծ մայրական արգանդի օրինակ են երկրպագել» (էջ 121): Այսինքն, որ Համբարձման գիշերը բացվելու են Ագռավաքարի դռները երկու աշխարհների միջև, և Խուտուինի աստվածը Միերին վերստին բերելու է նորոգում և հայոց աշխարհի նոր փուլն ու սկիզբը նորոգելու առաքելություն:

«Երբ սկսեցի առաջին անգամ կարդալ ազգային վեպի պատումները, – գրում է Խեչոյանը, – ինձ վրա էլ ցնցող տպավորություն էին թողել Միերի հակասականությունները, որ երբեմն ինքս էլ էի կասկածում նրա առողջ բանականություն ունենալուն» (էջ 93):

Վեպի գաղափարն սկիզբ է առնում Ագռավաքարում Միերի փակվելու վարկածից, որը ենթադրում է, թե նա կենդանի է առայսօր, և այդ վարկածի հիմքը կրկնվող այն դրվագն է, որտեղ տարին մեկ անգամ Համբարձման գիշերը Միերն Ագռավաքարից դուրս գալու, աշխարհի հետ

կապվելու փորձեր է կատարում, և ժողովուրդն իր հերթին հավատալով նրա կենդանի լինելուն, գիշերները քրմերի ծիսական երկրպագությամբ փորձում է միստիկ արարողություններով նպաստել նրա՝ քարայրից դուրս գալուն:

Եվ սակայն տարակուսանքները շարունակվում են. ազգային վեպի հարյուր հիսուն տարբերակների թանձրամած, հակասական, իրական ու միստիկական տեսիլներում Մհերի կերպարը տարուբերվում է գոյի ու անգոյության, իրականի ու ուրվականների անկերպարան քառսում: Կրակի բոցը պղնձե թիթեղից արևի լույսը անդրադարձնում է ժայռի վրա պառկած երկնագույն մողեսի, այդ անդրադարձը՝ Մհերի կյանքի ընթացքը պատմող արձանագրության, թե ինչպես նա ցերեկը երկնքից կրակ, գիշերը՝ սառնամանիք անապատով ստվերի պես երևացել ու հեռացել է հայրենի տնից, ապա աշխարհի չորս ծագերում թափառելուց հետո վերադարձել Սասուն և ծնողների կողմից վտարվել է Ագռավաքար, ընդմիջտ թաղվելու այնտեղ, ուր անդարձ մենության ձեղքերից իբրև կյանքի միակ արձագանք լսվում է միայն ծղրիղների կոհնչը: Մհերի ինքնական փակվելը Ագռավաքարում կարելի է վերագրել կենդանական աշխարհի ինքնապահպանության բնագոյի՝ գուգավորման ժամանակ սերմնաժայթքման ռեֆլեքսիային՝ պահպանելու տեսակի շարունակությունը: Եվ այնուամենայնիվ, երազային տեսիլքից գատ Ագռավաքարում Մհերի փակվելու ստույգ փաստը Կոզոռովիտ գյուղի հովվի վկայությունն է, թե «Համբարձման գիշերը Ագռավաքարի մուտքի մեջ կանգնած մարդը Մհերն է եղել, որի հետ զրուցել է ինքը» (էջ 17):

Ձիու խրխինջը լսելի է դառնում գավառի երիտասարդներին, և նրանք Մհերին հանդիպելու ակնկալիքով գալիս էին Սասուն, նրանց զանգվածային տեղաշարժերը կաթվածահար էին արել երկրի սոցիալ-հասարակական կառույցը, որի հանդեպ Մեծ տան երիցավագների քաղաքապետարանի ավագանու խորհուրդը փորձում էր ուստիկանական տեսուչների միջոցով կարգավորել աննախադեպ իրավիճակը: Սակայն ապարդյուն: Հոսքը գավառներից շարունակվում է՝ կանխելու համար իշխանությունների ձգտումը՝ ժողովրդին դեպի անցյալը տանելու փորձերը: Երիտասարդական շարժումները տիեզերական ինչ-որ փոփոխություններով էին նախանշվում. Սասունի իշխանական կառավարման համակարգը փլուզման վտանգի մեջ էր և երկիրը հասել էր հեղափոխության եզրին: Ընդհանուր այդ խառնակության մեջ ամբոխի տրամադրությունը փոխվում է, երբ Ագռավաքարում Մհերի փակման վեցերորդ օրը «շրջակա գյուղերում մոխրագույն ավանակով, շիկակարմիր զգեստներով մի պատանի էր շրջել, ի զարմանս բոլորի՝ հայտարարել էր, իբր ժողովուրդը Սասուն չգնար, դողանջը հանգիստ չէր տա նրանց, կստիպեր տառապելին» (էջ 19): Այսպես թե այնպես, աղետալին այն է, որ բոլոր կարգի խառնակությունների պատճառը վերագրում էին Մհերին՝ արատավորելով նրա կերպարի իրական բնույթը: Սա անորոշության տագնապներ է ծնում գրողի հոգեբանության մեջ՝ չափելու իր և Մհերի նմանության սահմանագծերը:

Ուրույն վարկածների տեղիք է տալիս Մհերի թափառումներն անապատում, տարակույսների առիթ էր դառնում միայնակ թափառումների

ԳՐԱՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2 (ժԲ) ԳՐԱԿԻ, ԹԻՎ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

ՎԷՆ համահայկական հանդես

անհիմաստությունն ու անհասկանալիությունը: Եվ սակայն թափառումների պատճառը ոչ թե մոլորությունը, շփոթմունքը, թուլամտությունն են, այլ «համամարդկային խիզախումների միլիոնավոր տարիների խորհուրդն ըմբռնելը» և տիեզերական շրջապտույտներում, մառախլածածկ անդունդներում հուսալքված ազգային ոգին որոնելու ձգտումը: Ազոավաքարում փակվելը որոշակի շրջադարձ է նշանավորում երիտասարդների նոր սերնդի գիտակցության մեջ: Նրանք այլևս չէին ցանկանում կառավարվել իշխանական մեծ տան օրենքներով, և երկրում սկսվում է խոշոր հուզումների խառնակիչ ժամանակների շրջանը:

Մեծ Տունը, քաղաքային իշխանությունները և հատկապես Վերգոն չարականորեն պնդում են Միերի անգոյությունը, մինչդեռ անժխտելի էր, որ Կոգոհովտի հովիվը պատմում է իր գրույցը Միերի հետ, որն ասել է, թե «երբ ինքը Ազոավաքարից էլնի, կկործանվի գոյաբանական անարդար աշխարհը»: Կսկսվի նոր կյանք, և Սասունն ու ժամանակի շրջանը կնորոգվեն, կփոխվեն ժողովրդի ապրելակերպն ու հոգևոր ուղիները (էջ 59): Միերն ասել է նաև, որ չարիքի պատճառն այն է, որ մարդիկ կորցրել են հավատը հողի նկատմամբ, ուրեմն թող մարդիկ սպասեն «տիեզերքում ցորենի նման նոր աշխարհի, նոր Հայաստանի աճելուն» (էջ 60): Երիտասարդությունը հավատում էր Միերի մարգարեությանը և գիտեր, որ նրա ճշմարտությունը փոխանցվելու է սերնդից սերունդ:

Բացի Կոգոհովտի վկայությունից, Միերի՝ Ազոավաքարում փակվելը տեսել էին նաև Տոսպան լեռան քերծերում ապրող ձգնավորները: Այստեղից լավող լուրերը նույնպես տագնապալից էին, թե քարե դամբարանում կենդանի մշտատանջությունը ձևափոխում է առաջ բերում նաև բնության մեջ, երկինքն այլաբանվում է, խորխորատները բարձրանում են, բարձունքները վերածվում են ձորերի: Ծագում են կասկածները Միերի չար բնավորության վերաբերյալ, որ պայծառատեսների գուշակությամբ, աշխարհի կործանման նշանը մանկան ասի մեջ պուտ արյան վարկածն է:

Դժվարանում են ասել՝ Ազոավաքարի միերյան առասպելները վիպական հորինումներ են, թե ազգային վեպի հարյուր հիսուն տարբերակների սղագրումներ, բայց Միերի թնջուկը շարունակում է նորանոր, հակասական մեկնություններով ընթացք տալ վիպական ժամանակի ու տարածության հոլովույթին: Բոլոր պարագաներում առանձնակի նշանակություն ունի Կոգոհովտ գյուղի հովվի պատմածը, թե ինքը հորթը փնտրելու ուղիներով հասել է Ազոավաքար, «քարերը հետ էին գնացել, Միերն էլ ձեռները կրծքին խաչած, մուտքին էր կանգնած եղել, կողքով էլ անընդհատ գիշերային թռչուններ են ելումուտ արել» (էջ 90): Նա երդվում է, որ Միերին տեսել է, գրուցել հետը, և նա ասել է, որ քարանձավից դուրս գալու համար ցորենի և գարու հատիկին է սպասում և ինքը դուրս կգա, կկործանի անարդար աշխարհը և նոր փուլի ու նոր շրջանի սկիզբը կդնի:

Որքան էլ գիտնական բանագետները պնդում են, թե հովվի վկայությունը Ազոավաքարում Միերի լինելու մասին սոսկ վարկած է, այնուամենայնիվ, Սասնա հասարակությունը հիշողության մեջ պահել է Միերի բնավորության երկակիությունը, անհնազանդ խռովարարի ըմբոստությունը, որ հասնում էր աշխարհի և բոլորին հակադրվելու խռովքին, և

մյուս կողմից՝ ինչ-որ բանի նվիրաբերվելու, նոր ուղիներ որոնելու ցանկությանը: Այս հակադիր ուժերի հետ, որ գործել է Միերի էության հետ, ըստ մի որոշ ենթադրության, Միերին թափառումների է մղել նաև անպտղության Դավթի նզովքը, որը հուսաբեկության, ունայնության, անիմաստ գոյության տառապանք է պատճառել նրան, և այդ ունայնությունն է, որ թափառումներից հետո վերադարձել է Ազոավաքար՝ կռահելով ինչ-որ նոր հայտնության մասին: Սա նոր իմաստ է տալիս Ազոավաքարի խեչոյանական մեկնությանը. «Ազոավաքարը ոչ գնդան, ոչ էլ քարե դամբարան կոչելն է ճիշտ, ինչպես ազգագրագետներից ու բանասերներից ոմանք են անում: Կարծում եմ՝ բնության արգանդի է նման՝ նյութական անգոյություն ծնող: Կարելի է ժողովրդի ողնաշար, քրոմոսոմ, հոգևոր բանականություն էլ անվանել կամ էլ հավերժական արժեքների, նպատակների և երազանքների խորհրդաբանություն, որտեղ ազգը միլիոնավոր տարիների ընթացքում մեղվի նման աշխատելով, հոգևոր հարստություն էր կուտակել» (էջ 95-96):

Ինձ թվում է, որ սա էական դրույթ է վեպի գաղափարում, որ ուղղություն է խորհրդանշում Միերի դռան առեղծվածը բացահայտելու տեսակետից: Մշտապես պետք է հիշել, որ «Միերի դռան գիրքը» փիլիսոփայական վեպ է, և Խեչոյանը միանգամայն ազատ է իր գլխավոր հերոսի վարքը համադրելու բնության, տիեզերքի ու սոցիալականության կատեգորիաների իմացության հետ: Ինքնին արդեն այլ գաղափար է հուշում Ազոավաքար վերադարձողի հայտնությունը, թե հնարավոր է այս աշխարհից գատ, ինչ-որ հեռավորության վրա «մեկ ուրիշ, առեղծվածային այլ աշխարհ էլ գոյություն ունենա»: Եվ այդ «առեղծվածային երկրի կանչը» ենթագիտակցում է ժամանակի շրջադարձը՝ գտնելու «այս աշխարհի կեղևը հատող ելքի դուռը»:

Թվում է՝ բանաձևումը պարզ է, և անհասկանալի ոչինչ չկա: Բայց անհասկանալին սկսվում է հենց այստեղից, քանզի առաջանում է «ինչու» հարցականը: Եվ ամենից առաջ այն, թե ինչու «հողն իր վրա չէր պահում Միերին, ամեն քայլափոխի փլվելով ոտքերի տակ՝ փորձում էր կուլ տալ ձիուն»: Մտորումը հասնում է միստիկայի և Խեչոյանին միայն հասկանալի՝ երևույթների մարկետայն ոճի համարիչներով փորձում գտնել անհասկանալին՝ տեսողական խաբկանք է, տարերային աղևտ, թե՛ տարերքի վկայությամբ՝ երկրագնդի չպտովելը իր առանցքի շուրջը և վեց օր աշխարհի մի մասում շարունակ գիշեր էր, մյուսում՝ ցերեկ: Կամ գուցե՝ ավելի պարզունակ կենցաղային խնդիրների պատճառով: Այսպես ահա իրարամերժ, հակասական կասկածների խառնաշփոթի մեջ առկայծում է Միերի կենդանի լինելու խորհուրդը՝ միանգամայն հասկանալի տրամաբանությամբ, թե ինչու Համբարձման գիշերը բացվեցին Ազոավաքարի դռները, կամ ինչ միստիկ պաշտամունքային ծեսերով քրմերը նպաստեցին Միերին դուրս գալու քարայրից և դնելու հին աշխարհի կործանումը և նորի ստեղծումը: Սակայն Խեչոյանի մտքի իներցիան գործում է հեռումների կանչով՝ փորձելով գտնել Ազոավաքարում հարյուրավոր դարեր մնալու խարիսխը: Հավանաբար Միերը քրոմոսոմի հյուլեի նման ընկած է եղել աշխարհարարման նախաստեղծ մայր արգանդի մեջ: «Բացակա տարա-

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2 (ՃԲ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒԽԱ-ՄԵՍԿՐԵՒՄԵՐ, 2014

ՎԷՆ ԽԱՄԱՆԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՄ

ծություն, ժամանակի միջից, որտեղ մի ակնթարթը երկրի մի տարվան է հավասար, ոչ խավար, ոչ լույս է հարյուրավոր տարիների միջով պորտալարի նման ձգված Ազոավաքարը, Մհերին է հասցնում տիեզերքի շշուկները, թե ինչպես են հանգչող մի պաղ աստղին մյուս տաքերը փոխարինում, տերությունները երերալով գետին թափվում, մշակույթները մշակույթների փոխարեն բարձրանում, դարերը դարերից հետո գալիս, ժողովուրդները ժողովուրդներից, պետությունները պետություններից հետո, քարտեզները քարտեզներով փոխարինվում, երկրագունդը շարունակ փոխակերպությունների ենթարկվում» (էջ 102):

Հնարավոր է արդյոք հասկանալ այս մետամորֆոզը, որ Խեչոյանի մեկնությամբ գուցե ակնարկում է ատոմային ռումբի կոճակի սեղմումով Մեծ Պայթյունի գալուստը, որ կործանելու է երկրագունդը: Թերևս այսպես, բայց ոչ Մհերյան ամեղծվածի լուծման բանալին, որ պարտադրում էր ազգային վեպի հարյուր հիսուն պատումների վերընթերցումը:

Վերընթերցումն էականորեն լրացնում է ազգային վեպի և նրա հերոսի ծագումնաբանությունը: Համենայնդեպս ուրարտական ժամանակաշրջանի մեհենասեպագիր արձանագրությունները հավաստում են, որ ազգային վեպը Ուրարտուի կազմի մեջ մտնող երեք պետությունների (Շարա, Բիայնա, Տուշպա) մշտական պատերազմների պատմությունն է Ազոավաքարի դեմ և Մհերի ազդեցությունը պատերազմների ընթացքի վրա, որպես միֆական, աներևույթ մի աստվածություն, որի գոյությունն առաջնորդում է ոչ միայն աշխարհի, այլև անդրաշխարհի էակներին: Այսպիսով, ազգային վեպի ծագումը վերաբերում է ուրարտական պետության ժամանակներին: Բայց դա միայն տարեգրական փաստ չէ, այլ նաև ուրարտական դավանանքի իմացաբանական հղումը՝ որպես քաղաքակրթությունների համընդհանուր ոգին ամբողջ լեռնաշխարհում:

Ընդհանրացնելով ազգային վեպի և իր հերոսի պատմական առաքելությունը՝ Խեչոյանը վիպական անցումները հաճախ լրացնում է մհերյան ոգու հավերժության խորհրդով, թե «այն մեզ չի լքել, նույնիսկ գերիզոր տերությունների, մինչև իսկ որդեսերման սերմը հագեցնող պատերազմների ժամանակ» և անգամ գոյատևել է մեզնից հետո, մեր պատմական հայրենիքի ամայի տարածություններում: Այդ ոգին պահ տալով միայն բանականությամբ ըմբռնելի Ազոավաքարում՝ պահպանել է մեր ազգային մտածելակերպի արժեքավոր հունդը, մեր տեսակի զորավոր քրոմոսոմը, կատարել է այդ արժեքները ապագա սերնդին փոխանցելու միստիկ արարողությունը:

Խեչոյանի մեկնություններն Ազոավաքարի վերաբերյալ մշտապես մատնված են ճշմարտությանը կասկածող երկընտրանք անորոշությանը: Նա կրկին ու վերստին անդրադառնում է երևույթի հակասական ըմբռնումներին, ձգտելով ճշգրտել այն սահմանը, որ գծվում է Մհերյան ոգու և Ազոավաքարի միջև: Եթե հավաստի է այն պատկերացումը, թե Ազոավաքարը լեռան խավարում ապրող չար ուժերի բնակատեղի է, և երկրային ժամանակի ճախարակի շարժումը հաշվարկող Մհերը չար ուժերի դրդումով ելնելու է կործանելու աշխարհը, ապա Մհերի կերպարն ավելի է սաստկացնում երկրագնդի քաոսը: Այնինչ Մհերի ընդվզումը ելնում էր

նոր արարչագործության ստեղծարար գաղափարից, և այս վարկածի հաստատումն է հովվի հանդիպումը Միերին և սրա պատգամի արարչական ոգին: Այս իմաստով, քարե դամբարանի մթությունը խավար չէր, այլ խավարից ծնվող լույս: «Միերը մտնելով Ագռավաքար՝ նախաստեղծ տիեզերական խավարն էր վերապրում: Նրա ներուժի մեջ էր գոյատևում ազգային համընդհանուր ճակատագիրը» (էջ 247), դարերի ընթացքում ձևավորված բանականությունը, և ապագա սերունդը դրանով է կռվելու հողագունդը կեղեքող ունայնության դեմ:

Միերի կենսագրությունը թախծոտ անհայտներ է բացահայտում Գոհար իշխանուհու հուշերում: Ատրպատականի Պաճիկ իշխանի դստեր վրա առաջին հանդիպումին անհաճո տպավորություն թողեց Միերը: Ոչ միայն արտառոց էր ֆիզիկական առեղծվածությունը, այլև բնավորության անհասկանալի շեղումները, ներանձնացումը, հեռացումի թախիծը: Եվ ահա, անհաղորդ Միերի ներքին թափառումներին, Գոհարը կյանքի մայրամուտին, հուշերի թախծությամբ վերապրում է Սասնա տան իշխանապետության անկումը:

Թափառումները հուշեր էին արթնացնում նաև Միերի խոհերում, Սասնա Տան մեծերի ծննդաբանության ավարտի շարունակության մեջ նշմարելով կատարյալին հասնելու իր հայտնությունը: Թե «այն չպետք է շարունակվեր մեկ այլ բանով՝ զավակով», քանզի ինքը պահպանվելու էր չճանաչված հավերժության համար: Մտորումները նրա միտքը տանում են դեպի հեռուները, նշմարում է, որ, այնուամենայնիվ, Սասնա տան այրերը հերոսության պայծառագարդ օրինակներ են տվել: Սակայն դրանք եղել են վայրկենական պահեր, որոնց հաջորդել են դատարկությունն ու անհուսությունը: «Ինչու՞ է այդպես, – մտորում է նա, – պատճառը հավանաբար ներսում մշտապես հակադիր երկու կեսերի մեջ է», բայց գաղտնիքը մնում է անբացատրելի, թե ինչպես կարող է մարդը երջանկության զգացում ունենալ, եթե մահկանացու է: Ներսում առկայծում էր «ավելի իմաստուն թաքնածածուկ աշխարհի» պատրանքը: «Ի տարբերություն նախնիների՝ Միերը համոզված էր՝ գոյատևելու համար պարտադիր չէ սպանելը: Երկրագնդի վրա բոլոր ողբերգությունների իրական պատճառը ապրելու համար սպանելու նշանաբանն էր» (էջ 275):

Այստեղ է Միերի որոնումների իմաստը, այսինքն՝ վերջ դնել սպանելուն, հրաժարվել ապրելու համար մարդուն, տոհմին, ազգին, ժողովրդին, երկրին սպանելու նշանաբանից: Այս բանաձևը շատ ավելի բարդ իմաստի է հանգեցնում Ագռավաքարի գոյականը. «Մի անձի զգացողություն կամ լռություն առաջանալը **ոչ մի բանից է**, երկրային լինելով երկնային է, հնարավոր է միայն կռահումներով մոտենալ» (էջ 282), որը թելադրում է, թե Միերի փակվելը Ագռավաքարում նման է արարող սերմի նախամայր տիեզերական արգանդին վերադառնալուն: Եվ քանի որ հազար տարուց ավելի քարայրն իր թաղանթի մեջ Միերին կենդանի է պահել, ուրեմն «Ագռավաքարը ցեղի ողնաշարին է նմանվում», իսկ Միերը փոխակերպվել է «սպերմնագոնիդի մեջ ապրող հոգևոր հիշողության»: Ագռավաքարից դուրս բերելու Համբարձման գիշերին կենդանացած բնության միջով կարմրածուփ աղջիկների մերկության հետ ամբողջ

ԳՐԱՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Զ (ԺԲ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒՍԻՍ-ՄԱՅՐԱՆԵՐ, 2014

ՎԷՆ ԽԱՆԿԱԿԱՎԱԿԱՆ ԽԱՆՔԵՆ

շրջակա առարկաների ու բուսական աշխարհի շարժումը մասնակից էր միերյան ոգու ծնունդին և ապագա կյանքի փոխանցմանը: Իսկ Ագռավաքարից Միերի դուրս բերելու անհրաժեշտության պատճառը «երկրագնդի առաջին մարդու՝ սպանելուց հրաժարվելն է»: Չէ որ խեչոյանական հայացքով տիեզերական ողբերգությունների նախապատճառը «ապրելու համար մարդ սպանելն է»: Լուսավոր ապագայի այս առաքելությամբ են խորհրդանշվում Միերյան ոգու փոխակերպումները, ինչպես օրինակ՝ փոխակերպումը ձվի, ուր Միերը դեղնուցի արևային կետն է, մեկ ուրիշ կյանքի սկզբնավորողը, ինչպես բուսական և կենդանական աշխարհում: Ագռավաքարը նման է նաև միստիկ ոգու, որ Միերի հետ արարում է հայրենիքի գոյությունը:

Միերի կերպարի վերլուծականը Խեչոյանը դիտում է Ագռավաքարից անբաժան: Նույնիսկ կարելի է ասել, որ նա կերպարի ներքին ու արտաքին շարժումները իմաստավորում է Ագռավաքարի արարչությամբ: Համադրելով հասարակաց կարծիքը գիտական մեկնություններին և ստուգելով այն ազգային վեպի հարյուր հիսուն տարբերակների վավերականությամբ, Խեչոյանը Միերի կերպարն ազատագրում է բացասող հատկանիշներից, նրա մեջ հայտնաբերում արարչության ստեղծարար ոգին, մարդկայնացնում է նրան: Ավելին, նա տեղայնացնում է ազգային վեպը, դիտում այն որպես պատմության հանրագիտարան: Այս հայացքով ազգային վեպը ոչ ավանդություն է և ոչ էլ միջնադարյան գզրոցների հորինաբանություն, այլ Հայասա, Ուրարտու երկրների հավատամքի գիրք, որպես իշխանական Մեծ Տան կրոնամիստիկ կարգակառույց:

Կամա թե ականա Ագռավաքարի միերյան երևույթը, Միերի անմահության ու աստվածացման առասպելը ուրույն մեկնաբանություն են ստանում աստվածաշնչյան առասպելի և Հիսուսի կերպարի համարնագրում: Մեր պարագայում համեմատությունը գաղափար էր տալիս Գրիգոր Լուսավորչի, 301 թվականին պաշտոնապես ընդունված պետական կրոնի՝ մինչև այս շարունակվող իրավակարգի մասին: Մինչդեռ հայտնի է, որ Գրիգորի հայր Անակը դավաճանաբար սպանել էր մեր Խոսրով թագավորին, իսկ մեր կրոնը նրա որդի Գրիգորին Լուսավորիչ է հռչակել: Ի հակադրություն կրոնական վարկածի, «ամենաառաջնային արժանիքներից մեկը ազգային վեպում «Հացն ու գինին տեր կենդանին է», որ մեր եռագույն դրոշի խորհրդանիշն է՝ «Դեղինը հացն է, կարմիրը՝ գինին, իսկ կապույտ գույնը՝ երկինքը, որտեղ Միեր աստվածն է ապրում» (էջ 356): Ինչ վերաբերում է Հիսուսի մեռնելու և համբարձվելու դիպվածին, ապա դարեր առաջ Սասունում Միերն է աստծո կերպարանքով վերապրել հեռացումի ու վերադարձի փորձառությունը:

Կարծես ասված է ամեն ինչ, և ներկա է Միերի հայտնությունը, սակայն թող արտառոց չթվա, եթե ասենք, որ առեղծվածի լուծումը տրվում է գրքի վերջին էջերում: Ամբողջ վեպի ընթացքում Խեչոյանը տրամաբանական քննության է առնում Միերի մասին բանահյուսական, գիտական և ավանդապատում վարկածները, մինչդեռ էականը Միերին հանդիպելն է Ագռավաքարում: «Նորից ու նորից Միերին եմ անդրադառնում, չնայած իմ ջանքերին, վերծանումներին, վերլուծություններին՝ իմ ամբողջ կյանքի

ընթացքում նա դարձյալ մութ ու անբացատրելի է մնացել՝ մեկ ուրիշ ժամանակի ու տարածության սահմաններից եկած» (էջ 369):

Սկիզբ է առնում բառիս իսկական իմաստով ցնորամիտ մի ուղևորություն դեպի Ագռավաքար, ուր իրերն ու առարկաները փոխարկվում են անդրաշխարհային ուրվականների, և միայն Ագռավաքարի բանականությունն է օգնում փարատելու Միերին հանդիպելու վախը, քանզի միայն նրա հետ հանդիպելը կփարատի նրա՝ բարի կամ չար լինելու անորոշությունը: Եվ միայն հանդիպումը կարող է ազատագրել մաշող տառապանքից՝ «կամ ինքը, կամ ես պիտի կործանվենք»: Գրողի և իր առասպելական հերոսի փոխաձևությունը միանգամայն այլ հարթության վրա է դնում ազգային վեպի և ներկա իրականության հարաբերակցությունը: Ոչ միայն գրողն է ներքուստ զգում Միերի բջիջների շարժումը, այլև Միերն է երազում տեսնում գրողին («մի քանի գյուղերի հետ էր ինձ իր երազում տեսնում»):

Ինքն արդեն Ագռավաքարում է և կասկած չունի, որ հանդիպելու է Միերին և վերստին ներզգայելու նախաստեղծ հյուլեն հողի արգանդում, որը հազարավոր տարիներ ուղեկցում է մեզ և Միերի միջոցով ուղեկցել է դարաշրջանների քաղաքակրթությունը: Եվ ահա ինքը Ագռավաքարում է, «կնոջ ամենախորհրդավոր տեղին՝ արգանդին էր նման, պաշտպանական թաղանթով ամենաապահովն էր Միերի հազարավոր տարիների գոյությունը պահպանելու» (էջ 377): Գիտակցում էր, որ Միերը, որպես համազգային ոգի, Ագռավաքարի հիշողության մեջ ապրում էր ժամանակից ու տարածությունից անդին, գաղափար, որ կարելի է կռահել ու հասկանալ միայն ամբողջ Ագռավաքարով մինչև վերջ անցնելու պարագայում, քանզի այդտեղով է անցնում ոչ միայն Միերյան ոգին, այլև ամբողջ աշխարհի արարման գոյությունը: Հանդիպման ձգտումն անվերադարձ է, բայց կար նաև վախի զգացումը՝ սպասումի պատրանքի փլուզումից «միաժամանակ վախենում եմ՝ բա որ հանկարծ հանդիպումը կայանամ»: Բայց մտասևեռումը մշտապես ճչում է՝ «Գնա, չկանգնես, գնա: Եթե միշտ գնաս, միայն այդ դեպքում կարող ես Ագռավաքարով Միերի միջով անցնես, եթե կես ճանապարհից վերադառնաս, Միերի վերածնունդը կիսատ կմնա» (էջ 381):

Անցումներն Ագռավաքարի ամբողջ տարածքով, տառապանքի, չարչարանքի, մղձավանջային տեսիլների ամբողջ պատկերը Խեչոյանը ներկայացնում է մտովի վերապրումով, ցնորական տեսիլների և ուրվականների ուղեկցությամբ, քանզի այլ ավարտ չէր կարող տալ վեպի սյուժեին, քան բնագանցորեն գիտակցված դրոյթ: Այստեղ է նրա գրողական կեցվածքը. «Ինձ արևն է կարգել, որ Ագռավաքար մտնեմ, ընթացքը տեսնեմ, ազգային վեպի մարդկանց հետ հանդիպեմ»: Ուղեկցող սուրհանդակը նրան հանդիպեցրել է ազգային վեպի մյուս հերոսների հետ, որոնք գոյություն ունեին Ագռավաքարի բովանդակության մեջ, և միասնություն էին կազմում սերունդների անվերջանալի պատմության և ամբողջական ժամանակի հետ: Այս միասնության մեջ Ագռավաքարի բանականության միջով անցնում է գոյության տիեզերական խորհուրդը, թե այնտեղ է գոյաձևում գերագույն արարչության ոգին, որը լցված է մարդկանց հանդեպ

սիրով և բարությանը, որ «այնտեղ աշխարհարարման բազմաբովանդակ գործընթացը ներքին ներդաշնակ զարգացում ունի և այդ աշխարհն իր տրամաբանական նպատակով ավելի իրական է, քան այն խառնափնթոր պատերազմներով, աղետներով, մահերով ուղեկցվող կյանքը, որով ապրում էր մարդկությունը» (383):

Սակայն պատմափիլիսոփայական այս դրույթը միանգամայն էմպիրիկ է թվում գոյի տիեզերական կեցության հանդեպ, որի բավիղներում դեգերում է Խեչոյանի տիեզերասույզ միտքը: Արգանդի պաշտպանական թաղանթի մեջ է պտղի հարատևության տիեզերական անհրաժեշտությունը, ուր կենտրոնանում են բոլոր ձայները, գույները, երանգները, մարդկային համընդհանուր հիշողությունը, ժամանակը հաշվարկող ճախարակի բզզոցը և քարերին զարնվող ձիերի խրխինջը: Ավարտվում է Ագռավաքարի փակ համակարգի վերաբերյալ առասպելը, և բաց դռների մուտքը դառնում է իրական: Այստեղ արդեն որոշակի են գծագրված ազգային վեպի խեչոյանական մեկնության ներհյուսական ու անջատման գուգահեռները համահավաքի և հարյուր հիսուն տարբերակների առասպելապատմական թաքնագրության միջև:

Այս թաքնագիտության մեջ է «Մհերի դռան գրքի» բնաբանի լուծմունքը. «Որտեղ էլ լինենք՝ դռան հակառակ կողմում ենք: Ներսիսներն այն ելքի, դրսիսները մուտքի դուռ են անվանում»: Համահավաքն ազգային վեպի երկրային ժամանակն է, առասպելապատմական թաքնագիտությունը՝ տիեզերական ժամանակը: Իրականի ու առասպելականի միացման գիծն էր անհամատեղելի, բայց անցման մեջ էր առասպելի հայտնությունը: «Աշխատում էի, – ասում է Խեչոյանը, – ասելիքս չհակադրելով չորս ճյուղերից որևէ մեկին», որպեսզի խորհրդապաշտական ու թաքնագիտական թնջուկների մեկնությունները չընկալվեն որպես «անդրաշխարհային կյանքով ոգևորված ուղեղի գառանցանք» (էջ 288):

Խեչոյանը որոշ իմաստով Մհերին դուրս է բերում ազգային էպոսի շրջանակներից և դիտում աշխարհաստեղծ աստվածության ժամանակի մեջ: Տիեզերքը ստեղծվել է Մեծ պայթյունով, որ մեր ժամանակներում հիշեցնում է ատոմային ռումբի կոճակը սեղմելուն: Երկրագնդի կործանումը, սակայն, նոր սկիզբ պետք է նշանավորի՝ «մեկ միասնական, երջանիկ մոլորակի նորոգման նոր փուլը»: Տիեզերքը ենթակա է քանդում-վերակառուցում պարբերական անցումներին, իրականանում է սկզբի և վերջի մասին գիտական մտքի կանխատեսումը, թե տրոհումը նման է լինելու արդեն մի անգամ պատահած Մեծ պայթյունին: Միլիոնավոր տարիների խառնակություններով երկիրը դարձել է անձև ու պարապ, և նոր պայթյունը սկիզբ կդնի նոր դարաշրջանի Հայաստանին՝ նորագույն մարդկանցով, որոնց արթնացած մարմինները պիտի հագնեն հոգիները և այն ժամանակ ներերկրայինին հակառակ՝ հոգին դուրսը պիտի լինի, մարմինը ներսը» (էջ 130):

Եվ այսպես՝ առաջին Մեծ պայթյունից ստեղծվել է Տիեզերքը, և երկրագունդը հայտնվել է տիեզերական ժամանակի մեջ: Այստեղ՝ Հայկական լեռնաշխարհում, կազմավորվել է մոլորակային բանականությունը, որի կարգավորության օրինաչափությունը միլիոնավոր տարիների ընթացքում

խաթարվել է բռնություններով, սպանություններով ու հակասություններով: Երկրագնդի կեղևն այլևս անընդունակ է պահելու Մհեր աստծո և նրա ձիու ծանրությունը: Անհրաժեշտ է մի նոր պայթյուն, որ կոչնչացնի հինը և կստեղծի նորը՝ Քրիստոսի երկրորդ գալուստով և ահեղ դատաստանով: Բայց Քրիստոսից դարեր առաջ այդ բանը գիտակցել է Մհեր աստվածությունը և փակվել է Ագռավաքարում, պատգամ առաջադրելով, թե դուրս կելնի քարանձավից և կփրկի աշխարհը, երբ «գարին կդառնա մաստրի չափ»: Ամբողջ վեպի ընթացքում գծվող հոռետեսական այս գաղափարը լուսավորվում է վերջին հայացքի տեսիլքով, երբ «հանկարծ մի ակնթարթ կարմրածուփ սուրհանդակը, բոցկլտացող նշանով, կողքին՝ կապտալույսի մեջ ձեռքերը կրծքին կանգնած Մհերին ցույց տվեց, Մհերն էր, միանշանակ նրան էի տեսել» (էջ 385):

Կա տիեզերական հոռետեսության մի սահման, որին անհաղորդ է մարդու ողբերգական անէությունը: Մտորելով, թե միայն հանդիպումը Մհերի հետ կազատագրեր իրեն տարիներ շարունակ հյուծող ու մաշող ստրկությունից, Խեչոյանը ճակատագրական գուշակություն է անում, թե «երկուսիցս մեկը՝ կամ ինքը, կամ ես պիտի կործանվենք» (էջ 372): Մհերը մնաց և կործանվեց ինքը՝ Մհերին թողնելով Մեծ պայթյունով մոլորակային վերածննդի երագանքը: Իրականը պատրանք է, առասպելը՝ հավերժական: Սակայն մինչև երբ և մինչև ու՞ր: Լուծու՞մ է, թե՞ փակուղի...

Սերգեյ Ն. Սարինյան – գրականության պատմաբան՝ տեսական-նացված պատմության առանձնահատկությամբ: Գիտական հետաքրքրությունները ներառում են գրականագիտությունը հումանիտար գիտությունների համակարգում, գրականագիտության մեթոդաբանության հարցերը՝ գրական ուղղությունների տիպաբանությունն ու պատմագեղագիտական հիմունքները, գրականության փիլիսոփայությունն իբրև հետազոտության մեթոդ:

Summary

THE MYTH OF MHER ACCORDING LEVON KHECHOYAN'S NOVEL "THE BOOK OF MHER'S DOOR" (Solution or impasse)

Sergey N. Sarinyan

The article is an attempt of textual analysis of Levon Khechoyan's novel "The Book of Mher's Door". By genre it can be called a novel-apocrypha with a complicated structure both in form and content.

Comparing the canonized version of the epos with the one hundred and fifty versions of the Armenian Epos, Khechoyan gives a new interpretation to the mythologism of Mher and Agravakar trying to reveal the cosmogonic be-

ginning of the Armenian Epos. According to the scientific hypothesis, the universe came into existence and developed in the result of the Big Bang, and the Earth being a celestial body, can also be renovated through the Big Bang just by pressing the button of the atomic bomb.

It is for this bang that waits Mher in the Agravakar claiming he will come out of the cave when “the wheat grain is the size of a dog-rose”.

According to Khechoyan, the cosmic reason has its origins in the Armenian Plateau, and just then the epos “Sasna Tsrer” was created which can be called a pro-epic by its world importance.

In the novel “The Book of Mher’s Door”, the epos is viewed as a transformation of contemporaneity just the way the modern-day Armenian being is seen as a transformation of the epic. As a historical and cultural phenomenon the epic “The Sasna Tsrer” reflects the philosophy of the Armenian history which continues today and goes to the future.

РЕЗЮМЕ

**МИФ МГЕРА СОГЛАСНО РОМАНУ ЛЕВОНА ХЕЧОЯНА
“КНИГА ДВЕРИ МГЕРА”
Решение или тупик?**

Сергей Н. Саринян

Предлагаемая статья является попыткой текстуального анализа романа «Книга двери Мгера» Левона Хечояна. По жанровому типу его можно назвать роман-апокрифом, со сложной структурой как по форме, так и по содержанию. Сопоставляя канонизированный вариант («Հովհաննիսր») со стопятидесятью вариантами эпоса «Сасна црер» («Давид Сасунский»), Хечоян дает новое толкование мифологизму Мгера и Агравакара, имея целью раскрыть космологическое начало армянского эпоса. Согласно научной гипотезе, Вселенная возникла и развивалась в результате Большого взрыва, и Земля являясь небесным телом, которая может быть обновлена при помощи Большого взрыва: нужно лишь нажать кнопку атомной бомбы. Этого и ожидает закрывшийся в Агравакаре Мгер-бессмертный.

По мнению Хечояна космический разум возник в пределах Армянского нагорья с доисторических времен. Тогда и сформировался Сасунский эпос, который по мировому значению может называться и Проэпосом.

Как историко-культурное творение, эпос «Сасна црер» является философией Армянской истории, поиском национального самосознания и социально-политического развития Армении.